

սիրով եւ պատուով ընդունեցաւ: Սահակ Ահա-
գին Զմիւռնիայէն երբ լսեց Սարգսին Պրուսայի
մէջ գտած ընդունելութիւնը, առաւել եւս բոր-
բոքեցաւ Սարգսի դէմ, եւ Յակոբ Պատրիարքին
գրեց, որ Սարգիս քիչ ատենէն Պատրիարքու-
թիւնը ձեռքէն պիտի առնու, ուստի դեռ Պոլիս
չեկած, անոր բարեկամներէն գաղտնի՝ լուծեամբ
զինք աքսորել տայ. վասն զի, կը գրէր Սահակ,
Ֆռանկներու դեսպաններուն պատուէր գացած է
իրենց մեծերէն, որ Սարգիսը՝ միտող ֆռանկնե-
րու, Պատրիարք ընեն: Այս ամէնը կ'ըսէր, իբր
թէ ինքն Սարգսին բերնէն առած ըլլայ գինու-
վութեան ատեն, եւ այս նպատակի համար է որ
նախկին Պատրիարք Գէորգայ հետ խորհուրդ
կ'ընէ եւ իրարու սէր կը ցուցնեն. Սահակ Ա-
հագնի այս ամէն յաջողկոտ զրպարտութիւն-
ները սուտ էին, վասն զի Սարգիս գինարբու-
չէր բնաւ եւ որեւէ դեսպանի ուղղուած թուղթ
չունէր, եւ ոչ ալ փառաց հետամուտ էր, եւ ի
սկզբանէ անտի փառքէ կը փախչէր:

Սահակ Ահագին անխոհեմութեամբ այս
գրած նամակը սենեկին մէջ բաց թողած էր, եւ
Սարգսի մէկ բարեկամը նոյնը կարդալով՝ անմի-
ջապէս հաղորդեց անոր Պրուսա: Սարգիս շատ
խռովեցաւ, իմացուց խնդիրը Գէորգայ, որ եւ
զինք մխիթարեց եւ քաջալերեց ըսելով՝ թէ ինք
Պոլիս շատ բարեկամներ ունի, եւ անմիջապէս կը
գրէ անոնց, որ իմանան թէ Սահակայ նամակն
ի՞նչ տպաւորութիւն ըրած է Յակոբայ վրայ:
Բայց Սարգիս չուզելով որ խնդիրը շուտով ծա-